ՀՏԴ 621.762.620.10

Ն.Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ.Ս. ՉԱԽԱԼՅԱՆ

ԲՆԱԿԱՐԱՆԻ ԻՆՏԵՐԻԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՕՊՏԻՄԱԼ ՆԱԽԱԳԾՈՒՄ 3DS MAX ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

(Գյումրի)

Կատարվել է բնակարանի ինտերիերի օպտիմալ նախագծում 3DS MAX ծրագրային միջավայրում: Նախագծման իրականացման համար համադրվել են մինիմալիզմ և կլասիկ ոճերը՝ ելնելով միջավայրի զոնաներից:

Փոփոխության են ենթարկվել գոյություն ունեցող բնակարանի միջնապատերը, ընտրվել է ողջ միջավայրի ընդհանուր գունային գամման, և նախագծվել են կահույքներ, որոնք առավել հարմարավետ և ֆունկցիոնալ են դարձրել բնակարանը:

Առանցքային բառեր. համակարգչային ծրագրեր, ինտերիեր, նյութ, դիզայն, միջավայր:

Ներածություն: Գրեթե բոլոր դիզայներական և ճարատարապետական նախագծերի գեղարվեստական ձևավորման ժամանակ մեծ դեր են կատարում համակարգչային ծրագրերով միջավայրերի լուծումների նախօրոք դիտումն ու քննարկումը: Իսկ ժամանակակից շինարարական նյութերի էսթետիկական և կիրառական առավելությունների շնորհիվ՝ հնարավոր է ամբողջությամբ վերանորոգել տարբեր միջավայրներ՝ վերջիններիս հաղորդելով յուրահատուկ և շքեղ տեսք [1,2]:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը: Նախնական տեսքով բնակարանն ուներ մեծ նախասրահ, 2 ննջարան, 1 պահոց, հյուրասենյակ, խոհանոց, պատշգամբ, սանհանգույց և լոգարան (նկ.1ա): Սակայն հյուրասենյակի և ննջարանների փոքր չափերն անհարմարություն էին առաջացնում, ուստի խնդիր էր դրվում միջավայրը դարձնել առավել կիրառելի ու հարմարավետ: Ելնելով այն փաստից, որ բնակարանում բնակվում է հայկական մեծ ընտանիք, որն ունենում է բազմաթիվ հյուրեր, ուստի վերանախագծման ժամանակ պատշգամբի հաշվին մեծացվել են հյուրասենյակն ու խոհանոցը (1,5մ-ով): Քանի որ նախասրահի միջնամասում առկա էր հիմնական պատ, ուստի հնարավոր բոլոր փոփոխությունները ծավալվում էին վերջինիս շուրջ: Արդյունքում նախասրահի հիմնական պատին զուգահեռ ստեղծվել է պահոցի գոտին (հորիզոնական դիրքից տեղափոխվելով ուղղահայաց): Ննջարաններից մեկի երկարությունը՝ միջանցքի և պահոցի հաշվին մեծացել է ևս 1 մետրով: Հանվել է նաև նախասրահը և հյուրասենյակը

բաժանող պատը, որին հետագայում փոխարինել է երկկողմանի պահարանը (նկ.1բ):





ա) *բ)*

Նկ. 1. Բնակարանի հատակագիծը վերանախագծումից առաջ ա) և հետո բ)

Հետազոտության արդյունքները: Գրաֆիկական պատկերների վերլուծու

Հետազոտության արդյունքները: Բնակարանի ընդհանուր գունային լուծումները կատարվել են սպիտակ, մոխրագույն և սև գույների մեջ: Նախասրահի և հյուրասենյակի պատերը ներկվել են բաց մոխրագույն ներկով, որը հնարավոր է մաքրել հետքերից [3]: Հյուրասենյակին առավել նրբագեղ տեսք հաղորդելու համար պատերից մեկը ձևավորվել է դեկորատիվ պաստառով, որն ապահովում է սենյակի գեղարվեստական տեսքը: Խոհանոցում պատերը ներկվել են սպիտակ գույնով, կրկին լվացովի ներկանյութով, իսկ ննջասենյակները՝ բաց և մուգ մոխրագույն: Վերջիններիս հատակը նույնպես մոխրագույն A3 դասի մանրահատակ է, իսկ միջանցքում և հյուրասենյակում օգտագործվել է A5 դասի մանրահատակ: Խոհանոցում օգտագործվել է սպիտակ, անփայլ սալիկ, որն ունի առանց կարերի շարվածք, ինչն էլ միջավայրին տալիս է առավել ընդհանրական տեսք: Լոգարանն ու սանհանգույցը սալիկապատվել են, 2 միջավայրներում էլ առկա են դեկորատիվ խճանկարներ, որոնք տալիս են առավել շքեղ ու հավաքական տեսք (նկ.2ա,բ): Լոգարանի լվացարանի հատվածն առանձնանում է իր յուրօրինակ տեսքով: Այն ամբողջությամբ պատրաստված է բետոնից և երեսպատված է պրեսգրանիտով, որն էլ առանձնահատուկ տեսք է հաղորդում վերջինիս (նկ.2գ): Սանհանգույցում տեղադրվել է հիգիենիկ ցնցուղ և փոքրիկ լվացարան: Բնակարանում առկա բոլոր ցնցուղներն ու ծորակները գերմանական արտադրության են, իսկ սալիկները՝ իտալական, որոնք իրենց դիզայներական տեսքով ավելի հետաքրքիր են դարձնում միջավայրը: Ընտրվել են կաթնագույն մինիմալիստական դռներ, որոնց վրա կան սև ապակուց մոտավորա-

պես 5*սմ* լայնությամբ բաժանումներ, որոնք պահպանել են բնակարանի համար ընտրված ոճը:

ա) *բ)* *գ)*

Նկ. 2. Լոգարանի և սանհանգույցի գեղարվեստական ձևավորումը

Նախագծի ընթացքում դիզայներական լուծումներին վերջնական տեսք հաղորդեցին հատուկ այս միջավայրի համար նախագծված կահույքները: Առանձնահատուկ ուշադրության է արժանանում նախասրահի և հյուրասենյակի երկկողմանի պահարանը, որը նախասրահի համար ծառայում է որպես զգեստապահարան, իսկ հյուրասենյակի հատվածում՝ գրքերի պահարան՝ բաց և փակ դարակներով (նկ.3): Հյուրասենյակի բազմոցը և աթոռները մոխրագույն են՝ բելառուսական արտադրության, իսկ ճաշասեղանը սև՝ մոլդովական արտադրության (նկ.4):

Նկ. 3. Նախասրահի և հյուրասենյակի երկկողմանի պահարանը

Նկ. 4. Հյուրասենյակի գեղարվեստական ձևավորումը

Խոհանոցի կահույքը սև է, առանց բռնակների, դարակների մի մասը սեղմում-հրում մեխանիզմով են բացվում, իսկ մյուս մասի դարակների ետնամասում առկա են մետաղական ներս ընկած հարթություններ, որոնք հնարավորություն են տալիս բացել այն ետնամասից, որի շնորհիվ կարելի է խուսափել ճակատային հատվածում մատնահետքերից [4]: Ջեռուցման և օդամղման համակարգերը, ինչպես նաև մնացած անհրաժեշտ տեխնիկաները (օդամղիչ, լվացքի մեքենա և այլն) թաքցված են կահույքի մեջ, առկա է նաև չորանոց: Խոհանոցում հարմարավետությունն ապահովված է էրգոնոմիկական բոլոր պահանջներին համապատասխան, այստեղ պահպանվել է նաև «եռանկյան սկզբունքը» (համաձայն սկզբունքի՝ պետք է պահպանել լվացարան-գազօջախ-սառնարան հեռավորություններն այնպես, որ աշխատանքային զոտին պահպանվի, ևան անհարմարություն չառաջացնի): Լվացարանը սև քարից է, որին համապատասխան ընտրվել է սև գազօջախ: Խոհանոցի սեղանն ու աթոռները նույնպես բելառուսական արտադրության են (նկ.5):

Ննջարանների կահույքները շագանակագույն են, կլասիկ ոճով նախագծված, որոնք սենյակին հաղորդում են ճոխություն, միաժամանակ պահպանելով հանգստություն և էսթետիկական նրբագեղություն: Բնակարանի դիրքից ելնելով (արևելք-արևմուտք)՝ ննջարաններում տեղադրվել են շերտավարագույրներ, որոնք նաև խնայում են հիմնասյուների արդյունքում առաջացած միջնորմների առաջ եկած 60*սմ* տարածքը:

Նկ. 5. Խոհանոցի գեղարվեստական ձևավորումը

Իսկ հյուրասենյակում և խոհանոցում առկա են միջավայրին համապատասխան վարագույրներ: Հյուրասենյակում առկա են նաև դեկորատիվ վարագույրներ, որոնք օրվա 2-րդ կեսին պաշտպանում են արևի ճառագայթներից և ապահովում են հեռուստացույցի լիարժեք տեսադիտումը (նկ.6):

Նկ. 6. Ննջարանների գեղարվեստական ձևավորումը

Բնակարանի հանգստի զոտիներում տեղադրվել են լյումենեսցենտային (ցերեկային) լույսեր, որոնք ցանկության դեպքում կարող են փոփոխել իրենց ռեժիմները՝ ապահովվելով տարբեր ուժգնության և գունային լուծումներով լուսավորություն: Իսկ ննջարաններում կիրառվել են շիկացող լամպեր՝ ջահերի առկայությամբ:

Եզրակացություն: Յուրաքանչյուր շինարարական նախագիծ ներառում է որոշակի գեղարվեստական լուծումներ, որոնք, կախված օգտագործվող նյութից, ստանում են համապատասխան դեկորատիվ տեսք: Ժամանակակից շինանյութերի լայնածավալ բազայի շնորհիվ հնարավոր է իրագործել ցանկացած դիզայներական մտահղացում, որը մատչելի է և արագ: Առաջարկված նախագծում իրականացվել են անհրաժեշտաբար բոլոր պահանջները՝ արդյունքում ստանալով ժամանակակից գեղարվեստական լուծումներով ձևավորված ինտերիեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Митина Н.** Дизайн интерьера. — М.: Альпина Паблишер, 2013. — 302 с.
2. **Ахремко В.** Стили интерьера в дизайне типовых квартир. – М.: Эксмо, 2014. – 224 с.
3. **Ахремко В.** Цвет в интерьере типовых квартир. – М.: Эксмо, 2014. – 224 с.
4. **Гацура**. **Г.** Мебельные стили . – М.: 2005. – 212с.

Н.Х. ХАЧАТРЯН, А.С. ЧАХАЛЯН

ОПТИМАЛЬНЫЙ ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КВАРТИРЫ В ПРОГРАММНОЙ СРЕДЕ 3DS MAX

Выполнен оптимальный дизайн интерьера квартиры в программной среде 3ds MAX. Для проведения дизайна сопоставлены стиль минимализма и классический стиль, исходя из зон окружающей среды.

Были изменены перегородки существующей квартиры, выбрана общая цветовая гамма всей среды и спроектирована мебель, в результате чего использование квартиры стало более удобным и функциональным.

Ключевые слова: компьютерные программы, интерьер, материал, дизайн, среда.

N.KH. KHACHATRYAN, H.S. CHAKHALYAN

AN OPTIMAL DESIGN OF THE APARTMENT INTERIOR IN THE 3DS MAX SOFTWARE ENVIRONMENT

An optimal design of the flat interior in the 3ds MAX software environment is carried out. Minimalism and classic styles are combined for the design based on the environmental zones [1,2].

As a result, the partitions of the existing apartment are changed, the overall color scheme of the entire environment is chosen, and furniture is designed which makes the use of the apartment more convenient and functional.

Keywords: computer programs, interior, material, design, environment.